«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Սոնիկ Բաղալյան

Մանկապարտեզ՝ «Կոտայքի մարզի Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.1Ազգային տոների դերն ու նշանակությունը նախադպրոցականտարիքի երեխայի կրթական գործընթացում 4

1.2Ազգային ծեսեր..... 12

2. Ամանորի ծես 14

Եզրակացություն 19

Գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեման արդիական է, քանի որ ժամանակակից հասարակության կարևորագույն խնդիրներից է բարոյական ազգային նորմերի ճիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը: Տոների և ծեսերի ուսուցման միջոցով երեխայի մոտ զարգանում է ստեղծագործելու, ինքնադրսևորվելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացում:

Յուրաքանչյուր մանկավարժ իր արջև պետք է դնի լրջագույն խնդիր. կրթել բարոյական, ազգային արժեքները բարձր պահող անհատներ: Նրանց մեջ սերմանել սեր հայրենիքի , ազգային մշակույթի, մեր նախնիներից ժառանգած ավանդույթների և սովորությունների նկատմամբ:

Երեխայի արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործում իրենց դերն ու նշանակությունն ունեն ազգային տոներն ու ծեսերը, որոնք համեմված են մեր պապերից ժառանգած ազգային երգ ու պարով, ավանդական խաղ-մրցույթներով, համեղ ուտեստներով և գունեղ տարազներով: Այս ամենի հետ ծանոթանալով՝ նախադպրոցական տարիքի երեխայի մոտ ձևավորվում է հարգանք ժողովրդական ավանդույթների ու սովորույթների հանդեպ, գեղագիտական ճաշակ, հերոսական արարքներ ու այդ արարքները կրող մարդկանց կրկնօրինակում:

Այդ ամենի իրականացման լավագույն միջոց են խաղերը, հեքիաթները, ազգային տոներին նվիրված միջոցառումները և պարապմունքները:

Ազգային տոների ու ծեսերի ուսուցումը կապ է ստեղծում մանկապարտեզի, ընտանիքի և համայնքի միջև, տանում նրանց սերտ համագործակցության, ինչի շնորհիվ բարձրանում է սաների ազգային մտածելակերպը:

Աշխատանքը կազմված է ներածությունից և երկու գլուխներից:

1.1Ազգային տոների դերն ու նշանակությունը նախադպրոցականտարիքի երեխայի կրթական գործընթացում

Ազգային տոները մանակապարտեզի առօրյայի անբաժանելի մասն են կազմում: Դրանք սաների համար ամենաուրախ ու տպավորիչ պահերն են: Տոները մեծ ազդեցություն են թողնում երեխայի զգացմունքների,դաստիարակության, հոգեկան ներաշխարհի և գիտակցության վրա: Տոների ձևավորումը և զարգացումը, որպես օրինաչափություն, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, պատմական, քաղաքական, էթնոմշակութային և կրոնական գործընթացների փոխազդեցություններով: Արտացոլելով հասարակության մեջ իրականացվող այդ գործընթացները, տոները կատարում են էթնիկ ավանդույթների պահպանման և դրանք սերունդներին փոխանցելու կարևորագույն գործառույթներ: Տոները կատարում են նաև էթնիկ ավանդույթների կողմնորոշման, հասարակական հարաբերությունների կարգավորման և անհատի պահանջների բավարարման գործառույթներ:[1] Այդ իսկ պատճառով տոնական համակարգի ձևավորման և փոփոխման գործընթացների ու մեխանիզմների, ինչպես նաև հասարակական ու ընտանեկան կյանքում դրանց գործառութային նշանակության բացահայտումը ոչ միայն տեսական, այլև կիրառական առումով կարևոր և հրատապ հիմնախնդիր է:

Ազգային տոները ունեն դաստիարակչական մեծ արժեք. դրանք հնարավորություն են տալիս արտահայտել իրենց զգացմունքներն ու մտքերը, արթնացնել հուզական ապրումներ:

[1] Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005

Հայոց ավանդական կենցաղում տարածված տոները գրականության մեջ և կենցաղային ընկալումներում շատ հաճախ ներկայացված են՝ ազգային, ավանդական, ժողովրդական, կրոնական, քրիստոնեական և այլ հոմանիշ անվանումներով, որոնք համակողմանիորեն արտացոլում են մշակութային այդ երևույթի էությունը:[2] Հիմնականում ծագել են նախաքրիստոնեական (հեթանոսական) շրջանում և հետագայում պահպանել հնագույն ծիսակարգին ու հավատալիքներին առնչվող մի շարք սովորույթներ ու արարողություններ: Միաժամանակ հարմարեցվել են քրիստոնեական գաղափարախոսությանն ու տոնացույցին: Դարեր շարունակ պահպանվելով՝ հասել են մեզ փոփոխված ու նոր երանգավորումներով՝ հարմարեցվելով ժամանակի տնտեսական, քաղաքական և հասարակական պահանջներին: Նոր տարուց հետո առաջինը հանդիսանում է Քրիստոսի Ծննդյան ու Մկրտության տոնը (Ծննդյան տոն), որը կատարվում է հունվարի 6-ին: Ըստ էության՝ այն խորհրդանշում է տարվա սկիզբը և ժամկետով անխախտ է: Համարվում է տարվա առաջին արևածագի օր և կապվում ջրի, արևի պաշտամունքի, մեռնող-հառնող աստվածության գաղափարի և այլ հավատալիքների հետ: Ծննդյան տոնի պատարագից հետո հայ եկեղեցում կատարվում է ջրի օրհնություն (Ջրօրհնեք), Ծնունդից 40 օր հետո՝ Տյառնընդառաջը, որը նույնպես անշարժ տոն է (փետրվարի 14-ին): Մի շարք տոներ ընթանում են ժողովրդական տոնախմբությունների և ավանդական արարողությունների ուղեկցությամբ: Դրանց մի մասը նվիրված է Քրիստոսի (տերունական տոներ), մյուս մասը՝ սրբերի (սրբոց տոներ) հիշատակին: Ըստ համապատասխան տոների՝ հայ եկեղեցին սահմանել է պահոց և ուտիքի օրեր: Գրեթե բոլոր խոշոր տոներն ուղեկցվել են երգերով, պարերով, խնջույքներով, մարզական, թատերական և այլ բնույթի խաղերով/վիկիպեդիա/:[3]

Ազգայի տոների կազմակերպումն ու անցկացումը մանկապարտեզում, նպաստում է երեխայի բարոյական դաստիարակությանը: Թեմատիկ երգ ու պարի, բանահյուսական նմուշների, խաղ-մրցույթների կիրառումը, ավանդական ուտեստների պատրաստումը, տարազների կրումը, կերպարների կերտումը երեխայի մոտ ձևավորում է սեր դեպի հայրենիքը, ընտանիքը, ազգային մշակույթը,

[2] Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005
[3] Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005

գրականությունն ու արվեստը, բարձրացնում է գեղագիտական դաստիարակությունը:

Ազգային տոների ժամանակ արժևորվում են բնության երևույթները, երեխան սերտորեն կապվում է բնությանը, և նրա մոտ ձևավորվում է էկոլոգիական դաստիարակություն:

Երեխաների ամենասիրված ու սպասված տոնը Նոր տարին է:Այն նշվում է մեծ շուքով: Հայերի թերևս ամենաավանդական Նոր տարին նշվում էր մարտի 21-ին: Այս տոնը նաև Ծաղկամուտ է կոչվել՝ վկայակոչելով գարնան գալուստը: Այդ օրը հայ արորդիները նշում են Վահագնի ծնունդը, որը հին հայերի գլխավոր տոնն է համարվել: Օրվա խորհուրդը կրակն էր: Ամանորը (հին հայերենում՝ «նոր տարի»), հայերը նշում էին տարվա առաջին ամսին՝ օգոստոսի 11-ին և կոչվում էր **Ամանոր**: Ամանորը հայկական դիցարանում նոր տարին անձնավորող, «նոր պտուղների ամենաբեր» համարվող աստվածն էր: Բառի ծագումնաբանությունը բխում է բնապաշտական Ամանոր աստծուց, որ հենց մարմնավորում էր Նոր տարին, Երկրի և մոլորակների պտույտը: Հայոց դիցարանում Ամանորը պտղաբերության, բերքը պահպանող աստվածն էր: Ամանորի եղբայր Վանատուրը հյուրընկալության աստվածն էր, և նոր տարին նվիրված էր Ամանորին ու Վանատուրին:[4] Հայերի մեջ

տարբեր ժամանակներում նոր տարին տարբեր օրացույցներով ու ժամանակամիջոցում է նշվել, բայց դրանից տոնի էությունը չի փոխվել: Ամանորի եղևնին հայկական ծագում չունի, սակայն հայերի մոտ վաղնջական ժամանակներից ծառի պաշտամունք է եղել: Հայ իրականության մեջ առանձնահատուկ է եղել սոսենու, ուռենու, բարդու և կաղնու պաշտամունքը, ծառ զարդարելը զուտ հայկական երևույթ

է եղել և մեզ է հասել վաղնջական ժամանակներից: Եվրոպայում ծառ և եղևնի զարդարել են միայն 16-րդ դարից: Հնուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ձիթապտղի կամ խնկի ծառ: Մրգերով ու չրերով զարդարված Կենաց ծառը եղել է տոնի խորհրդանիշը: Ամանորի գիշերը երեխաները շրջում էին տներով և տների երդիկից կախում էին գոտիներից ամրացված իրենց գուլպաները, որպեսզի տնեցիք կաղանդչեքով լցնեին դրանք:

[4] Քաջբերունի, Հայկական սովորույթներ

Ենթադրաբար մերօրյա ամանորյա զարդարանքների մեջ կրակարանի մոտ կախված գուլպաները հայկական հին ամանորյա սովորություն են:[5] Հայերն ունեցել են նաև իրենց «Զմեռ պապը»՝ հանձին Մեծ Պապուկի: Ամանորյա սեղաններին պետք է լիներ առնվազն յոթ կերակրատեսակ: Այդ թվում պարտադիր էին տոլման, անուշապուրը, մայրամապուրը, տարեհացը, գաթաները, աղանձը:

Տեառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է: Երբ Մարիամն ու Հովսեփը քառասնօրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը« Տեառնընդառաջ՝ Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Հեթանոսական կրոնների մեջ մեծ տեղ էր գրավում կրակի պաշտամունքը: Կրակը խորհրդանիշն էր Արևի և Լույսի, ինչպես նաև՝ ջերմության: Կրակը համարվում էր նվիրական սրբություն: Ընտանեկան բույնը, երդիկը կոչվում է նաև օջախ, ծուխ: Սովորաբար Տյառնընդառաջի հրավառությունը վերագրվում է հայոց Տիր, ինչպես նաև Միհր աստծուն: Տիրը երազների մեկնիչն էր և պաշտպանը՝ դպրության ու արվեստի, իսկ Միհրը մարմնավորում էր կրակի ու լույսի ուժը: Տոնի գլխավոր նպատակն էր՝ կրակի միջոցով ազդել սառնամանիքների վրա և զորացնել արևի ջերմությունը: Արարողությունները եկեղեցում սկսվում են երեկոյան ժամերգությամբ, որից հետո արգելվում է «Լույս զվարթ» շարականը: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն: Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Հին Ջուղայում փշե դեզը եկեղեցու գավթում պարտավոր էին պատրաստել նույն տարում պսակված երիտասարդները:

[5] Վիքիպեդիա

Հանդիսակատարության ժամանակ նույն երիտասարդները, վառ մոմերը ձեռքում, շարքով կանգնում էին դեզի առաջ: Երբ քահանան, կարգը կատարելով, իր մոմով առաջինը վառում էր դեզը, նրանից հետո իսկույն վառում էին նորապսակները, և այլևս ոչ ոք: Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով: Դեզը վառելու միջոցին հրացաններով կրակում են, որոնց ձայնից շները վախենում են և մի կողմի վրա փախչում: Փախած կողմով էլ որոշում են այդ տարվա հողային առատությունը: Շիրակում և Բասենում էլ դեզը վառելու իրավունքը տրված էր նորապսակներին: Վաղարշապատում և շրջակա գյուղերում նորահարս ունեցող տունը դըրընդեզի տոնին հրավիրում էր աղջիկներին և հարսներին: Քավորը բռնում էր նորապսակ տղայի ձեռքից, որն էլ բռնած էր լինում նորահարսի ձեռքից, և երեք անգամ պտտում դեզի շուրջ, ապա երեք անգամ թռնում էին խարույկի վրայից: Կրակի վրայից թռնելը նպատակ ուներ ազատվել չլավից (ոչ լավ, չար բան): Նույն նպատակով էլ վառում էին շորի մի մասը, փեշը: Հավաքվածներն ուշադիր հետևում էին ծխի ուղղությանը. այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին: Անցյալում նորահարսերը ճյուղերի վրա տարբեր գույների կտորներ՝ լաթեր էին կապում, որևէ իղձ պահում մտքում և այդ ճյուղը գցում եկեղեցու բակում վառվող խարույկը: Քանի դեռ կրակը վառվում էր, կանայք մի սկուտեղի վրա լցրած փոխինդը, աղանձը, չամիչը, ընկույզը, կարմրացրած եգիպտացորենը, բոված սիսեռը, դդմի կորիզը և այլն բերում էին, պտտվում կրակի շուրջը, մի մասը բաժանում երեխաներին, մյուս մասը ներս տանում: Կրակի մոտ շատերը փոխինդ էին շաղախում մեղրով կամ դոշաբով: Տարեկան երկու անգամ՝ Տյառնընդառաջին և Ս. Սարգսին շաղախած փոխինդ ճաշակելն ուղղակի անհրաժեշտություն էր:[6] Մեր մանկապարտեզում պարտադիր նշում ենք նաև Տեառնընդառաջի տոնը:

[6] Քաջբերունի, Հայկական սովորույթներ

Մանկապարտեզի բակում կրակ ենք վառում և շուրջը պտտվելով երգում ենք ծիսական երգեր: Դաստիարակների օգնությամբ երեխաները ցատկում են կրակի վրայով, տարբեր հատիկային կուլտուրաներից բաղկացած հատիկեղենը սփռում են շուրջը, իբրև առատության խորհրդանիշ:[7]

Սուրբ Զատիկ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է: Աստծո Որդին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ: Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը, ծիծեռնակն ու սարյակը: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, հավանաբար այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ է պատճառը, որ գրպաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն: Զատկական ձուն« օրինակն է բոլոր աշխարհի, և ինչպես որ իմաստուններն ասում են՝ դրսի կեղևն նմանում է երկնքին, մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ

[7] Սարգսյան Ա. Ազգային տոներ

երկիրն է, այսինքն՝ մեջը (Թորգոմ վարդապետ)։ Գրիգոր Տաթևացին էլ նման միտք է արտահայտել ձուն կարմիր ներկելու մասին.

Միայն Զատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է։ Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ։ Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը։ Ուշագրավ է, որ ձուն համարվում է կենաց ծառի, կյանքի խորհրդանիշ։ Զատիկի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագից, որի ավարտից հետո տնետուն անցնելով՝ մարդիկ իրար հայտնում են Ս. Հարության ուրախաբեր ավետիսը՝ ասելով.

Քրիստոս հարյավ ի մեռելոց։ Օրհնյալ է հարությունը Քրիստոսի։

Մեծ ոգեւորությամբ և խանդավառությամբ ենք մանկապարտեզում նշում Սուրբ Զատկի տոնը։ Տոնի նախաշեմին երեխաները պատրաստում են զանազան զարդարանքներ։ Նախապատրաստում ենք դատարկ ձվի պատյաններ, որոնք իրենց ձեռքով գեղեցիկ գույներով նկարազարդում են։ Այդ գեղեցիկ գունագեղ ձվերով հետո զարդարում ենք դահլիճում դրված ուռենու ճյուղերը։ Նախօրոք դաստիարակի օգնությամբ բամբակի վրա ցանում են ցորեն, գարի, որը զատիկի խորհրդանիշներից է։ Զատկի օրը դահլիճը համապատասխան ձևավորվում է։ Սեղաններին դնում ենք Սուրբ Զատկի տոնին նվիրված ուտելիքներ՝ ներկված ձվեր, չամչով փլավ և այլն։[8]

[8] Նախաշավիղ

1.2Ազգային ծեսեր

Հայ ժողովրդի կյանքի ու կենացաղի անբաժանելի մաս են կազմում հայկական ազգային ծեսերը: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: : Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:[9] Ծեսը նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, էթնոսին, պետությանը: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է (ритуал):[10] Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ իրավիճակներում (ծնունդ, պսակադրություն, մահ, իշխանության փոփոխություն և այլն):

Ծեսրի իրագործումը կրթօջախներում նպաստում է հայկական մշակույթի փոխանցմանը սերնդեսերունդ: Նախնադպրոցական ուսումնական հաստատությունը համարվում է այդ ամենի սկիզբը, և մենք ամեն գործառույթ պիտի կիրառենք բազմակողմանի զարգացած, հասրակությանը պիտանի, դաստիարակված, բարոյական բարձր արժեքներ կրող անհատ ձևավորել:Այս ամենին նպաստող կողմերից մեկը ծեսի իրագործումն է մանկապարտեզում, որը հիմնականում կատարվում է խաղերի, մրցույթների ակտիվ միջավայրում: Խաղի միջոցով լուծվում են խնդիրներ, որոնք կյանքը դնում է մանկան թե՛ ֆիզիկակա ն, թե՛ մտավոր, թե՛ հոգևոր զարգացման ընթացքի վրա: Հենց այս պատճառով էլ խաղը

[9] Անտոնյան Ինգա Ծեսով ուսուցման մանկավարժական փորձի վերլուծություն
[10] Սահակյան Տաթև Ծեսը որպես ինտեգրված թեմատիկ միավոր

դառնում է ծիսական միջավայրում ներառվելու միջոց: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն:[11] Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է:

Նախապատրաստական աշխատանքների ընթացքում երեխաները շփվում են, քննարկում, պատմում: Այդ ամենի շնորհիվ մեր մյուսին է փոխանցում իր իմացածն ու երևակայածը: Ազատ շփման, խաղերի միջոցով երեխայի մոտ ձևավորվում է խոսքի զարգացում, ազատ արտահայտվելու , ինքնադրսևորվելու, սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն: Իսկ եթե այդ ամենը կատարվում է ծեսերի իրագործման ընթացքում, երեխան ծանոթանում է հայկական վարք ու բարքին, մշակույթին, սովորույթներին, դառնում դրա կրողն ու կերտողը:

[11] Սահակյան Տաթև Ծեսը որպես ինտեգրված թեմատիկ միավոր

Ծիսական խաղերը ուղեկցվում են հայկական երգ ու պարով, մաղթանքնեևով, օրհնանքներով: Երեխան արդեն մանկապարտեզից ծանոթանում է ծիսական երգերին, բանահյուսության լավագույն նմուշներին: Ծիսական երգերը ուղեկցվում են արարողակարգերով, որոնց ժամանակ երեխանը նվերներ են փոխանցում միմյանց՝ համադրված երգ ու պարով, գովասանքի խոսքերով:

2. Ամանորի ծես

Թեմանն՝ Ամանորի ծես

Նպատակը՝ Զնավորել հաղորդակցվելու և համագործակցելու կարողություն

Նպաստել ազգային մշակույթի յուրացմանը

Զարգացնել խոսքը

Խնդիրներ՝ Ծանոթանալ ծեսի պատմությանը և առանձնահատկություններին

Գտնել հին հայկական ծիսական երգեր, խաղիկներ

Նյութերը՝, ինքնաշեն խաղալիքներ, կաղանդի ծառ, ձմեռային տնակ,գուլպա,ընկույզ, գաթա, տարեհաց, հալվա, աղանձ, քարտեր, գծապատկերներ:

Մեթոդը՝ զրույց

Ընթացքը՝

Միանում է հայկական ծիսական երաժշտություն, Դատիարակը ասում է հանելուկներ Ամանորի մասին, երեխաները գուշակում են:

- Երեխաներ իսկ ի՞նչ տոն է մեզ մոտ:
- Նոր տարի,
- Իսկ ի՞նչն է Նոր տարվա զարդը:
- Տոնածառը:
- Որտե՞ղ է տոնածառը:

Հնչում է երաժշտություն, դաստիարակը մոտեցնում է կաղանդի ծառը, անջատվում է երաժշտությունը, տալիս կաղանդի ծառի մասին տեղեկություն:

«Հնուց ի վեր հայերը եղևնու փոխարեն Ամանորին զարդարել են ձիթապտղի կամ խնկի ծառ, իսկ զարդերը եղել են բնության պարգևներ: Նոր տարվա երեկոյան ձիթենու համեմատաբար հաստ ճյուղը խրել են նախապես խփված մեծ հացի կամ բաղարջի մեջ: Այդ ճյուղը կոչվել է Կաղանդի ծառ: Տան անդամները նախ ընկուզեղենով զարդարում էին ճյուղը, այնուհետև տանտերը ճյուղը տանում էր եկեղեցի, քահանան օրհնում էր, իսկ հետո այն բերում էին տուն և ամրացնում գերանին: Տոնածառի խաղալիքները հասկերից, ընկույզներից պատրաստված զարդարանքներ էին, որոնց վրա կախվում էին չարխափաններ, ինչպես նաև մարդակերպ և կենդանակերպ թխվածքներ»:[12]

Դաստիարակը առաջարկում է զարդարել իրենց պատրաստած խաղալիքներով, ընկույզով ու գույնզգույն կոնֆետներով՝ հնչեցնելով նախապես սովորած բարեմաղթանքներ:

Շնորհավոր մեր Նոր տարի...
Թող ամենուր ծաղկի բարին,
Թող Նոր տարում, Սուրբ Ծննդով
Աստված բարին միշտ կատարի:

Զմեռ պապը թող լույս բերի,
Երջանկություն, կյանք ու բարիք,
Ջերմ խնդություն՝ օջախներին,
Մանուկներիս՝ պայծառ գալիք:

Զմեռ պապը մեր իմաստուն
Բերի եւ երգ, բերի եւ պար,
Անսահման սեր, խաղաղություն,
Հրաշքների մի ողջ աշխարհ:

- Երեխանե՛ր, դուք ինչպե՞ս եք պատրաստվում Ամանորի գիշերը:
- ……

[12] Վիքիպեդիա

- Հնում մեր նախնիները այլ կերպ էին նշում Ամանորը: Ամանորի գիշերը երեխաները շրջում էին տներով և տների երդիկից կախում էին գոտիներից ամրացված իրենց գուլպաները /կախու-կախու կամ գոտեկախ/, որպեսզի տնեցիք կաղանդչեքով լցնեին դրանք: Ենթադրաբար մերօրյա ամանորյա զարդարանքների մեջ կրակարանի մոտ կախված գուլպաները հայկական հին ամանորյա սովորություն են:

Կաղանդ ծառի կողքին լինում էր ևս մեկ, սակայն ավելի փոքր ծառ, որի վրա մոմեր էին դրվում: Այդ ծառը կոչվում է «չաթալ ծառ». «Չաթալ ծառի վրա ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է իր համար մոմ վառեր: Իսկ տան մեծ մամիկի մոմը պետք է առաձնահատուկ լիներ: Հին ժամանակներում Ամանորի գիշերը, երբ երեխաները հավաքվում էին, սկսում էին մամիկից չիր ու չամիչ ուզել: Սակայն եթե մամիկի տվածը բավական չէր երեխաների համար, նրանք ցորենի հատիկներ էին գցում մամիկի վառած մոմի վրա՝ փորձելով հանգցնել: Իսկ մամիկն էլ ստիպված նրանց կրկին տալիս էր անուշեղեն»:[13]

- Հնում տոների ժամանակ մեծ տեղ էին զբաղեցնում խաղերը: Իսկ դուք տոնական ի՞նչ խաղեր գիտեք:

- ……

- Դուք արդեն ծանոթ եք շրխկան չարխափաններին /նախապես երեխաներն են պատրաստել/: Եկեք, խաղանք..

Միանում է ցածր երաժշտություն՝ շվիի նվագակցությամբ: Ով գուշակում է երաժշտական գործիքի անունը, նա է շրխկացնում չարխափանը:

Երեխաները հերթով ասում են <<չար>> և <<բարի>> բառեր,<<չար>>-ի դեպքում շրխկում է, <<բար>>-ու դեպքում՝ ոչ: Ով խառնում է, պարտվում է, հաջորդն է գալիս

[13] Վիքիպեդիա

չարխափանը շրխկացնելու: Այսպիսով երեխաներ հարստացնում են բառապաշարը, տարբերակում չարն ու բարին,սովորում հոմանիշ զույգեր:

Ամենաշատ բառեր ասողը պարգևատրվում է Ամանորյա փոքրիկ <<կուլոկով>>:

Դաստիարակը ներկայացնում է <<կուլոկ>>-ի գաղափարը:

- Երեխաներ իսկ ո՞վ է նվերներ բերում ձեզ Ամանորին:
- Ձմեռ պապը:
- Եկեք կանչենք Ձմեռ պապիկին:
- Ձմեռ պապիկ …..

Տնակի հետևից դուրս է գալիս Կաղանդ պապիկը, ողջունում է երեխաներին, ծանոթանում նրանց հետ, պատմում է իր մասին, որ եկել է դարերի խորքից և իր հետ բերել է Ամանորի յոթ կախարդական խորհուրդը, որի կարիքը ունեն թե՛ մեծիկները և թե՛ իրենց նման հրաշալի փոքրիկները: Այդ խորհուրդները կկախենք կաղանդի ծառից, որ իրականանան ձեր նվիրական երազանքները:

Հարգանք, խաղաղություն,

ազնվություն, իմաստություն,

աշխատասիրություն, համեստություն

զոհունակություն:

- Երեխաներ, այսօր ծանոթացանք Ամանորյա հին ծեսերի, խաղերի հետ, հին իրերի հետ, որոնք կիրառվել են Ամանորյա ծեսերի ժամանակ: Դրանց պահպանումն ու իրագործումը առօրյա կյանքում մեզ ավելի են հզորացնում,քանի որ դրանք մեր մշակույթի մի մասնիկն են: Իսկ հիմա ձեր առջև դրված են փոքրիկ քարտեր, որոնց վրա պատկերված են տարբեր ծեսերին պատկանող նկարներ,/քարտերը երկրաչափական պատկերներներ են/: Գտնում եք այսօրվա թեմային պատկանող նկարները և ստանում ինչ-որ Ամանորյա պատկեր:

Երեխաները աշխատում են զույգերով:

Աշխատանքը ավարտվեց, դաստիարակը ստուգեց, առաջարկեց շրջան կազմել:

Կանչեց խմբի ամենափոքրիկ սանին, որպեսզի նրա մեջքին կտրի տարեհացը, ընթացքում նաև ներկայացրեց տարեհացի խորհուրդը: Երեխաները շուրջպար էին բռնել <<Բասեն բարի>> ժողովրդական երգի հնչյունների ներքո:

Ցուցադրվեց նաև մյուս ուտեստները, երեխաները համեմատեցին նախկին և ներկա Ամանորյա ուտեստները, կարծիքներ հայտնեցին և ճաշակեցին տարեհացը: Մետաղադրամը բաժին ընկած սանը արտասանեց բանաստեղծություն:

Պարապմունքին ներկա էին տնօրենը, մեթոդիստը և երաժշտության դաստիարակը: Նրանք դիտարկեցին պարապմունքը:

Դաստիարակը լիովին հասավ իր նպատակին, երեխաները կարողացան համեմատել հինը նորի հետ, նրանց մեջ ձևավորվեց խոսքային և հաղորդակցական կարողություններ, միմյանց հետ համագործակցելու կարողություն, ստացան մեծ ծավալի նորություններ Ամանորյա ծեսերի վերաբերյալ, ամբողջ պարապմունքը ուղեկցվում էր ազգային երգ ու պարով,անգամ երեխաները հնչեցրեցին երաժշտական գործիքների անուններ: Ծիական խաղերն ու ծիսակարգերը գործողության մեջ դնելով՝ դաստիարակը լուծեց կարևոր խնդիրներից մեկը. նախադպրոցական տարիքի երեխային դարձրեց այդ ծիսակարգի կրողն ու փոխանցողը:

Երեխաները ազատ էին, անկաշկանդ, ոգևորված, ազատ արտահայտում էին իրենց մտքերն ու կարծիքները:

Թեման արդիական է, քանի որ հայ ժողովուրդը անընդհատ բախվում է իր գոյը պահպանելու խնդրին, և ինչպես պատմությունն է ցույց տալիս, այդ խնդիրները լուծվում են այն ժամանակ, երբ մենք ամուր կառչած ենք մեր արմատներին, ընդունելով նորը՝ չենք մոռանում ավանդականը, հայկականը, մեզ հայեցի պահող ազգային արժեքները:

Եզրակացություն

Այսպիսով՝

1. Երեխայի զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ տոներ, ծեսեր, որտեղ նրանք դառնում են այս ամենի կրողն ու փոխանցողը: Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, ձեռք է բերում նոր գիտելիքներ և փորձ:
2. Ազգային տոներն ու ծեսերը սերտորեն կապված են բնությանը: Երեխան առնչվելով հատկապես բնության զարթոնքին նվիրված տոներին ու ծեսերին, ստանում է էկոլոգիական դաստրարակություն:
3. Երեխայի խոսքային և հաղորդակցական կարողությունների զարգացման համար ազգային տոների և ծեսերի իրագործումը նպաստավոր միջավայր է: Խաղը հնարավորություն է տալիս երեխային ազատ մթնոլորտում ինքնադրսևորվել՝ շփվել, կարծիք և տեսակետ հայտնել:
4. Ազգային տոների և ծեսերի շնորհիվ երեխան ծանոթանում է մեր գրական, բանահյուսական ժառանգությանը՝ զարգացնելով մայրենի լեզուն, բառապաշարը:
5. Ժողովրդական տոների կազմակերպման և անցկացման միջոցով երեխայի հոգին հարստանում է, սերմանվում հարենի հողի հանդեպ սերը: Ազգային տոները դրական ազդեցություն են թողնում երեխայի հուզական ներաշխարհի վրա՝ ուրախանում է հիանում է, ոգևորվում: Երեխայի մոտ ձևավորվում է գեղարվեստական ճաշակ:
6. Մթնոլորտը դառնում է անկաշկանդ, և երեխան կարողանում է ինքնադրսևորվել, զարգանալ, ունենալ սեփական կարծիքն: Ազգային տոներն ու ծեսերը ձևավորում են բարձր արժեհամակարգ ունեցող անհատներ:

Գրականության ցանկ

1. Անտոնյան Ինգա Ծեսով ուսուցման մանկավարժական փորձի վերլուծություն

2. Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
3. Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավա-տալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:
4. Սարգսյան Ա. Ազգային տոներ
5. Սահակյան Տաթև Ծեսը որպես ինտեգրված թեմատիկ միավոր
6. Քաջբերունի, Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]:
7. Վիքիպեդիա
8. Նախաշավիղներ